



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻԷ. — ՇՐՋԱՆ ԺԴ.

1881

ՏԱՐԻ ԺԴ. ԵՍԻԼԻՍ 31.

Կ Ե Ն Ս Ա Պ Ի Ռ Ի Թ Ի Ի Ն

ԵՐԶԱՆԱԿԱՅԵՐՏԱԿ Տ. Տ. ՓԻԼԻՊՊՈՍ ԿԵԹՈՒՂՈՍՈՍ ԸՄԵՆԵՐՆ ԿԸՆՈՅ.

1633 — 1654 ԱՄԻ.

Չամչեան Հ. Սիրայէլ իւր աշխատասիրած երեք մեծահատոր Հայոց պատմութեան մէջ երրեւոյն կամաւ ծածկելով ճշմարտութիւնը պզտորում է իւր միամիտ ընթերցողներին մտքերը, որի ամեն մի կամոյց եւ ակամայ սխալները քննելու եւ ճշմարտութիւնն իյոյս անելու համար մեծահատոր գրքերի ու երկարժամանակի է կարօտ. բայց մեր այժմ բաւականանա՞նք երջանկայիշատակ Տ. Տ. Փիլիպպոս ամենայն Հայոց Կաթողիկոսի կենսագրութեամբ, որ Չամչեանն իւր պատմութեան Գ. հատորի 622 — 629 երեսներում գրեթէ մեծ մասամբ յեղաշրջելով է պատմում, լռելով այն ամեն հանգամանքներն ու պարագաներն, որ ա. Հայրապետի հետաքրքրաւէտ լաւօր էին համարուել, ծածկելով այն ամեն գործերն, որ յօգուտ Հայութեան էր եւ ի մնաս պապականութեան ազդակործան ջանքերի:

Բացատրենք ուրեմն համառօտիւ այն բուն պատճառներն, որք Չամչեան կամաւ ծածկել է եւ յեղաշրջել ուղիւմ ընթերցող-

ների եւ պատմութեան անաչառ քննադատների ուշադրութիւնը հրաւիրելով ս. Փիլիպպոս ամենայն Հայոց Կաթողիկոսի կենսագրութեան վերայ, բաշխեալ մեր եւ Չամչեանի գրածներն եւ ըստ այնմ ընդունել ճշմարտութիւնն:

Երբ վախճանեցաւ ամենայն Հայոց Մովսէս Գ. Կաթողիկոս Սիւնեցին, նորա աշակերտ վարքով ու բարքով առաքինի Փիլիպպոս եպիսկոպոսը, որ արգէն բոլորի սէրն ու համակրութիւնը գրաւած էր ի վաղուց անախ, ըստ հաճութեան Արեւելեան եւ Արեւմտեան (Պարսկահայաստանի եւ Տաճկահայաստանի) Հայոց ընտրեցաւ Կաթողիկոս ամենայն Հայոց ի ս. Էջմիածին, 1633 թուի Յունւար 13ին օծուեցաւ ս. Էջմիածնի Մայր տաճարումն ըստ կանոնաց Հայաստանեաց ս. եկեղեցւոյ մերում եւ ազգի: Առաքել ահանաւես պատմիչը գովումէ Տ. Տ. Փիլիպպոսին ճգնաւ, պահէցաւ, որբախտահար, հրաշագործ, խնայող եւ Զեա-հանճար տիարդոսներով, եւ պապ սկսումէ մի առ մի պատմել նորա ազգաշէն գործերն (Գլ. ԻԳ եւ ԻԵ):

Արգարեւ թէ պատմութիւնը, թէ նորա ազգաշէն գործերի յիշատակները, եւ թէ նորա նպատակն ու հեռատես ընթացքը բաղայայտ վկայ են, որնա (Տ. Տ. Փիլիպպոս Հայրապետ) Հայաստանեայց եկեղեցւոյ ընտրելագոյն Կաթողիկոսներէից մին է, որ իւր ձեռնադրուելուց յետոյ անմիջապէս սկսեց բարեկարգել եկեղեցին եւ եկեղեցականներն, ալլելիլ մերձակայ վանքերին, բարեկարգել, ուղղել միաբանութիւններն յորգորելով եւ խրատելով իսկ պապականութեան կողմ շեղուող եւ Հայոց ազգութեան վնասու եւ պարզամտաց գայթաղութեան պատճառ եղող անդգամներն հեռացնելով՝ արթուն հովուի պէս պահպանելով իւր հօտը գայիերից եւ գառնաղգեստ յափշտակողներէից, բարեկարգեց նաեւ Երեւանու հիւսիսակողմում այգեստանեայց մէջ Անանիա առաքելոյ վանքն*), ուր եկաւ

(*) Ի հնուց Երեւանում կայր մի փոքրիկ վանք Անանիա առաքելոյ անունով, զոր Տ. Տ. Մովսէս Գ. Սիւնեցին — Նախորդն ս. Փիլիպպոս Կաթողիկոսի 1611ին նորոգել էր, իսկ Տ. Տ. Փիլիպպոս աւելի շքեղացրեց զայն, ընդարձակեց եւ բարեկարգեց, ուր իւր Կաթողիկոսութեան օրերը այն սեղանեկացնելու համար հանդերձ իւրայնովք՝ բաւական սենեակներ շինեց, յաճախ գնում բնակում էր անդ: Որովհետեւ

նոյն միջոցին Լատինացի Պօղոս ժիզուիթ կրօնաւորն, ժիզուիթարար հաճոյացաւ ս. Հայրապետին, ապա սկսեց Վանական դպրոց բաց անել, հաւաքել մի քանի ժառանգաւորներին ու դասախօսել նոցա, բայց քիչ միջոցի մէջ իմաստուն Հայրապետն զգալով նորա պապականութեան պրոպագանտայի ոգին ու նպատակը, խոտիւ յանդիմանեց եւ հեռացրեց, իբրեւ զգոյշ երկրագործ խելով որոմն, որ բուսել էր իւր մաքուր անդատանի մէջ, արտի մօտքը փակեց որոմնացանի դէմ, բայց որոմնացանը չհեռացաւ իւր մտադրութիւնից, այլ գնաց Տաճկահայաստանի կողմերը ցանելու իւր ժանտ ու ապականիչ սերմերն:

Այն ինչ Տ. Տ. Փիլիպպոս կաթողիկոս սկսեց երջանկայիշատակ Տ. Տ. Մովսէս Գ. կաթողիկոսի սկսած եւ անկատար թողած Եջմիածնի շինութեան ձեռնարկել, Տաճկ — Պարսկական պատերազմն ծագեցաւ, Եջմիածին երկու անհաշտ թշնամիների սանտիսն լինելով՝ Մովսէս կաթողիկոսի շինածներն քարոքանդեցան. բայց յետ խաղաղութեան՝ ազդաշէն Հայրապետն կրկին ձեռնարկեց նորոգել եւ Տաճարի տանիքն կոփածոյ քարով շինեց, զոր աւարտելուց յետոյ գնաց Ասպահան, Պարսից տէրութեան մայրաքաղաք իշահ Մայր Աթոռոյն ս. Եջմիածնի եւ ընդհանուր

հեռեւ Երեւան քաղաքն եւ նորա թեմերը խկզրանէ անտի ս. Եջմիածնի ամենայն Հայոց կաթողիկոսի անմիջական իշխանութեան ներքոյ գտնվի, ժամանակի կաթողիկոսն իւր կողմից փոխանորդ էր կարգում մի եպիսկոպոս կամ վարդապետ, ոյդ փոխանորդն նստում էր քաղաքին մերձակայ Զորագնդի վանքն, որ եւ Անապատ էր կոչւում, իսկ ս. Փիլիպպոս կաթողիկոս կամեցաւ բնակուել Անանիա աստրելոյ վանքն, որ նոյնպէս Անապատ էր կոչւում: Երեւանու քաղաքի եւ իւր բոլոր թեմերի բացարձակ իշխանութիւնն, ինչպէս ասացինք, խկզրանէ անտի կաթողիկոսների ձեռքն էր եւ այլ առաջնորդ չէ եղած երբէք Երեւան քաղաքի եւ նորա վիճակների մէջ, այլ խկզրանէ անտի կաթողիկոսաց փոխանորդ եպիսկոպոսներով կամ վարդապետներով էր կառավարւում եւ Ռուսաց բարեխնամ կառավարութիւնն էլ իւր 1836 թ. պալատէնիւյ մէջ ընդունելով այս հին սովորութիւնը հաստատեց, Երեւան իւր բոլոր թեմերով, որք են Բագրեւանդ, Էրիւրակ, Մասեացոսան, Արագածոտն, Նիգ, Աշոցք, Վարաճնունիք, Գեղարքունիք, Կոտայք, Գուեղյոյ գաշտ, Շարուր, Հին Նախիջևան, Երլնջակ, Գողթն եւ ի վերջոյ պալատէնիւյ մէջ նշանակեցաւ եւ Տաթև ս. Էջմիածնի ամենայն Հայոց կաթողիկոսի անմիջական իրաւասութեան ներքեւ գնելով բոլորովին առանց ուրիշ առաջնորդի:

Հայ ազգի նպատակ ունելով եւս. Լուսաւորչի Աջն կրկին վերադարձնել ս. Էջմիածին, զոր Շահարբասի ձեռք 1613 թ. շատ մի մասունքների ու եկեղեցական սպանների ու զարդերի հետ տարած էին իս. Զուղայ գաղթող Հայերն, Գրեթէ մի տարու չափ ս. Հայրապետն մնաց Առաջահան քաղաք, սիրալիր ընդունելութիւն գտաւ թէ մեծամեծ նախարարների եւ թէ Շահսէֆի մօտ, յաջողեցաւ հրաման ստանալ ս. Աջն վերադարձնելու ի ս. Էջմիածին, բայց Նոր Զուղայեցի Հայեր զանազան պատճառանքով միայն իւրեանց շահը մտածելով, եւ ոչ օգուտն ընդհանրութեան ազգիս՝ չկամեցան տալ եւ պատրաստեցան մինչեւ անգամ ընդգրկմանով բոլորովին, եթէ ս. Հայրապետն բռնութիւն գործ դնէ. բայց իմաստուն Հայրապետն պահեց ս. Աջն մի վաճառականի բեռների մէջ եւ ուղարկեց ի Գալիքէ, եւ ի վերադարձին ստանալով բերաւ ի ս. Էջմիածին 1638 թուի Սեպ. 20 ին.

Տ. Տ. Փիլիպպոսի այս բացակայութեան ժամանակ Ղրիմու թաթարներ գալով Հայաստան ոչ սակաւ վնասներ տուին Հայոց եւ սրբոյ Էջմիածնին եւ ապա մեկնեցան դէպ ի Պաղգատ օգնել Օսմանեա նորադ. բայց երբ սրբազան Հայրապետն հասաւ Էջմիածին, առանց վհատելու կրկին ձեռնարկեց քանդուածներն նորոգելու եւ զանազան քաղաքներում ու գիւղերում եկեղեցիներ շինելու, վաճառք նորոգելու եւ կրկին ցրուած միաբաններն հաւաքելու, այս մասնաւոր շինութիւններից յետոյ ձեռնարկեց մեծագործութեան, Յշական գիւղի (Վաղարշապատից 10 վերստի չափ հեռու դէպ ի հիւսիս՝ Արագածի ստորոտում) եկեղեցին Ս. Մեսրոպի զամբարանի վերայ 1639 թուին ի հիմանց նորոգեց եւ ս. Հռիփսիմի եւ ս. Գայիանէի տաճարներն գեղեցիկ հրաշակերտութեամբ ուր գտնելով նոյն ս. կուսանաց մարմիններն առանձին առանձին տապանների մէջ, բաց անելով վեր առաւ նոցանից մի մի մասն եւ կրկին փակելով իւրաքանչիւր տապանի մէջ՝ թաղեց իւրեանց յատկացեալ տեղերն եւ նոցա վերայ շարունակեց շինութիւնն մինչ ցաւարտ:

Ս. Փիլիպպոս Հայրապետ ոչ միայն շինութեան սէր ունէր եւ միայն նորանով բաւականանում էր, այլ եւ ըստ իւր ուսումնասէր բնասորութեան աշխատում էր եւ ուսմամբ զարգարել եկեղեցւոյ ժառանգաւորներն. ս. Էջմիածնի մէջ եղած վանական դպրանոցն եւս նորոգեց, ընդարձակեց ու բարեկարգեց. Այս

գաղափարացիք ինչպէս ի վաղուց անտի միշտ ուսեալ յարդապետ-
ներ գործ էին եկել ու եկեղեցիին պաշտպանել էին զանազան
ազանգաւորներ զէմ, այս անգամ եւս ս. Փիլիպպոսի աշխա-
տութեամբ սրբածանք դարձաւ ս. Աթոռին՝ բաւական ուսեալ
աշակերտներ տալով ազգին, որք ժամանակին օգնեցին թէ ս.
Աթոռին եւ թէ ազգին, յորոց մին է եւ անուանի Ասկան վար-
դապետ Երեւանցին:

Երբ Հայաստանի մէջ ս. Փիլիպպոս Հայրապետի աշխատութեամբ Պարսկական իշխանութեան ներքոյ Հայ եկեղեցիքն արեւելարգութեան մէջ էր, բայց Տաճկաստան եւ Կ. Պօլիս երկար տարիներէ ի վեր ներքին խռովութիւն, կազ եւ կռիւ էր տիրում պապականներէ կողմ միտած բաւական թուով երեսելի Հայոց ձեռք, որք յաջողել էին իւրեանց ազգավնաս դործերի մէջ, սոքա ամօրից գցեցին ս. Եջմիածնի նուիրակ Տ. Դաւիթ վարդապետին — Պօլսոյ պատրիարքին, որ հաւատարիմ էր Հայ եկեղեցոյ աւանդութեան եւ աշխատում էր ամենայն Հայեր ս. Եջմիածնի հետ ի մի կապուած տեսել, հակառակ ջանից Հռովմայ պրոպագանտայի (դաւաճման):

Չամչեան Հ Միքայէլ լռում է Տ. Դաւիթ Պատրիարքի աթոռից գցելու պատճառները բացատրելին, ինչպէս վստիկ է պատմաբանի, այլ ծածկելով եւ ծածուկով է պատմում այն ամեն կէտերն, որ Հռովմին օգուտ չեն բերում. գրում է թէ Վանդաշահանայ ընկէցին դժուր յԱրեւոյ քննելէ քեզոյն. բայց թէ ի՞նչ են այդ պատճառներն, չէ գրել, թէ եւ քաջ գիտէր, բայց մեք բաց անենք այն վարագոյրն, այն լռութեան ծածկոյն, որի տակ պահում է Չամիչը Հռովմայ պապիւրի հակառէն, որով խկզրանէ անտի կամեցել են որսալ Հայաստանեայց եկեղեցւոյ ուղղափառ հօտի ոչխարներին:

Պարզե՛նք մեր ասածն .

Պապականութեան ուսկանի մէջ նախ կանխաւ ընկած էր Կի-
լիկիոյ Հայ եկեղեցիւն զրեթէ Ռուբինեանց հարստութեան Ժա-
մանակից, եւ օր ըստ օրէ ընդարձակուելով այդ առաձգական
ուսկանն փոքր Հայաստանի մէջ, եւ ի Կ. Պօլիս Կիլիկիայից գաղ-
թօղ Հայերից բաւական որսեր ունեցաւ այդ որսացեալ Հայեր
17րդ դարուն Կ. Պօլսում մեծ հարստութիւն ձեռք բերելով
յաջորդել էին ձեռք բերել նաեւ արքունի ծառայութիւններ:

առաջին կարգի սեղանաւորութիւններ, եւ փոքերանոցի (գա-
րապհանէ) մեծ վարպետի պաշտօնը բոլորովին հայ պապականի
ձեռքին էր, ոսկերիչների գլխաւոր վարպետներից շատերն եւս
պապականութեամբ խմբուած գաղանի պապական էին, որք
անշուշտ Հռովմայ օգուտն վեր էին դասում ս. Լջմիածնի
եւ քնդհանուր Հայ աղգի օգտից, Հայ ազգութիւնից շեղուած
դէպ ի Լապիւնալան-նէն՝ աշխատում էին որքան կարելի էր
գաղանի պահել այդ, որովհետեւ նոյն ժամանակի քաղաքա-
կան դրութիւնն եւ հանգամանքները չէին ներում նորանց
բաց յայտնի բաժանուել Հայ եկեղեցուց եւ չէին կարող
ուստի աւամայ Հայ պատրիարքների եւ ամեն նահանգաց ա-
ռաջնորդների թեւոց ներքեւ պահպանւում էին Զպիւաւ. Հայ
քահանայից ձեռօք կատարում էին իւրեանց երեսանների Պա-
պ-նէն, Կրդէն նոյնպէս եւ հաւանաւաց պապի Խորհուրդն եւ
ամենայն հոգեւոր արարողութիւններ, բաց ի ԽՈՍՏՈՎԱՆՈՒ-
ԹԻՒՆԻՅ եւ ՀԱՂՈՒԴՈՒԹԻՒՆԻՅ, որովհետեւ ի ներքուստ պապա-
կան լինելով, արտաքուստ միայն պարտաւորեալ աւամայ Հայ
քահանայից ձեռօք կատարում էին Հայաստանեայց եկեղեցւոյ
Ժիւակատարութիւններն ըստ պահանջման շահու իւրեանց,
իսկ ի ծածուկ ունէին իւրեանց համար Հայ կաթողիկ պրոպա-
գանդայի գործի աշակերտներից ծպտեալ իրրու քահանայք, որք
աշխարհականի հագուստներ հագած՝ ծածուկ մտնում էին հոգ-
ւով պապականների մէջ, որոց կոչում էին ԲԱԹԵՐԱՅ, քա-
րողում էին նոքա պապականութիւն, եւ իստա ծածկաբար գաղտ-
նագողի մտնելով Հայ կաթողիկացեալ երեւելիների եւ հարուստ
սեղանաւորների տները, քուսպնէում ու իւրեւում (սենեակների
պատի մէջ շինուած մեծ ու փոքր պահարան) ծածկաբար պա-
տարագ անելով հազորդում էին իւրեանց հետեւողներին, եւ
երբեմն՝ երբ իմանում էր Հայոց պատրիարքարանը՝ բռնում Թա-
նում էր նորանց իրրեւ խորեբայ եւ բաղինացեալ Հայ՝ պատ-
ժում էր, Այս էր պատճառ, որ Տ. Գաւթին վայր գցեցին աթո-
ռից եւ նորա տեղը պատրիարք գրին Լատինամիտ Կիրակոսին,
որ իսկոյն եւ եթ փութաց իւր հպատակութիւնն գրել Հռովմայ
Ուրբանոս Ը. պապին, որի յորդորանօք եւ հրամանաւ սկսաւ
շրջել Հայաբնակ զանազան քաղաքներ ու նահանգներ Հռով-
մայ աւան գցելու եւ Հայերից որսեր տնելու

Կիրակոս պատրիարքի այս հակադժային ընթացքը մեծ խռովութեան պատճառ եղաւ, Հայ կաթողիկոսներ յայթուեան գրողակ բաց արին, Քաղզիոյ Գեօպանատան Հայ կաթողիկ թարգմանների միջամտութեամբ ամենայն դէպք նպատաւ որ էին պապականութեան պրոպագանտային. ի խաճութիւն, ասկին, խորամանկութիւն, կեղծիք, նենգութիւն, խաբէութիւն նոցա զէնք էին, եւ որ մեծն է, Կիլիկիոյ տգէտ եւ պապականութեան վազուց խմբեալ եկեղեցականների ազգակործան զեղծ ընթացքն, կարծես բոլորը միազած Հայութիւն հաւաքաշնակցել էին, միայն ս. Էջմիածնի ընտրեյագոյն Հայրապետների եւ նոցա նուիրակների, Արքեպիսկոպոսների, եպիսկոպոսների, վարդապետների եւ գիտուն քահանաների ու ողջամիտ Հայ եկեղեցականների, բարեպաշտ իշխանների եւ ժողովրդեան արթուն հսկողութիւնն էր որ կարաց զիմադրել այս ազգակործան ընթացքին եւ պահպանել Հայ եկեղեցին եւ ազգն, Բայց այս յայտնի իրողութիւնը լռում է Չամչեանը:

Երբ Կիրակոս պատրիարք Հայաքնակ զանազան քաղաքներ պրոպագանտայի ուսկան գցելուց յետոյ վերադարձաւ Կ. Պօլիս, ու ժանտախտից բռնուելով մեռաւ, կրկին անգամ պապականացեալ Հայեր Քաղզիոյ գեօպանատան միջնորդութեամբ Քաղատացի Խաչատուր վարդապետին պատրիարք գրին, բայց ողջամիտ Հայեր այս անգամ յաջողեցան նախկին պատրիարք Տ. Գաւթի աշխատութեամբ գցել աթոռից եւ կրկին Գաւթին պատրիարք գրին Այդ միջոցին Լատինացի Կլէմէս Գալանոս կրօնաւորն իւրայնոց հետ խորհեցաւ հնար գտնել, կրկին գցել Աթոռից Տ. Գաւթին տէրութեան նախարարների ձեռք, բայց Տ. Գաւթի յաջողեցաւ այս անգամ խափանել նորա մտադրութիւնը, տէրութիւնից հրաման հանեց Կլէմէս Գալանոսին աքսորելու, եւ այն ինչ տանում էին նորան դատաւորի մօտ, Քաղզիոյ գեօպանի Հայ կաթողիկ թարգմաններն ու սպասաւորները գրամ ծախսելով ազատեցին հաւաքէն (ստիկանութեան սպասաւոր) ձեռքից եւ նաւով փախցրին Եւրոպա: Սակայն դարձեալ չապահովեցաւ Տ. Գաւթի պատրիարքութիւնը, վասն զի այս դէպքից քիչ յետոյ Կլէմէս Գալանոսի աշակերտ Թովմաս վարդապետ աշխատեց կրկին վայր գցել Տ. Գաւթին, եւ աքսորել Կիպրոս կղզին ու ինքն յաջորդել, որ եւ

յաջողեցաւ: Բայց երբ չկարաց տէրութեան նախարարներին խոստացած տուրքը վճարել, որի խոստումնով յաջողել էր պատրիարք լինել, վախուստ տուեց Հռովմ, եւ դարձեալ Տ. Դաւթին յաջողեցաւ Վ. անգամ պատրիարքութեան պաշտօն վարել աքսորից վերադառնալով, սակայն կրկին կազ եւ կռիւ չվերջացաւ Կ. Պօլսոյ բուն Հայոց եւ պապական Հայոց մէջ, 11 տարուայ մէջ 1639—1650 թիւ Տ. Դաւիթ չորս անգամ ել եւ էջ արաց պատրիարքութեան Աթոռի վերայ, Հայ կաթողիկոսացեալ երեւելեաց ձեռօք իջնելով եւ Հայ Ժողովրդեան ձեռօք բարձրանալով. վասն զի բուն Հայեր ցանկանում էին այնպիսի պատրիարք ունենալ, որպիսին էր Տ. Դաւիթ, որ Հայ եկեղեցին, Հայ հաւատն ու ճէսերն պաշտպանէ, իսկ պապականութեան շեղած Հայերն, որ հարուստ էին եւ մեծ ձայն ունէին այն միջոցին տէրութեան պաշտօնէից մօտ, աշխատում էին իրանցից պատրիարք գնել, որպիսին էր Կիրակոս, որ կարողանային իւրեանց նպատակին հասնել — Հռովմայ ծառայել: Խզճալի Հայոց ազգը իւր կրօնն ու ազգութիւնը պահելու նպատակաւ շատերը սիրով եւ յօժարութեամբ նուէրներ էին անում պէտք եղած տեղերը ծախսելու համար, եւ շատերն էլ մեծագումար պարտուց տակ էին ընկնում թէ ի Կ. Պօլիս եւ թէ ի դաւառս, մինչեւ անգամ ոչ սակաւ եկեղեցիք իսկ մեծ պարտուց տակ էին ճնշվում. եւ երբեմն նոցա զարգերն ու ս. սպասները գրաւ էին գնում ընտանի թշնամեաց — Հայ կաթողիկոսաց ձգտումներն խափանելու համար, որ աշխատում էին շատերին եւս իւրեանց հետ Հռովմայ գիրկ գցել, Հայ եկեղեցւոյ եւ ազգութեան ծոցից խլելով:

Այս դառն վիճակին մի դարման գտնելու յուսով՝ ողջամիտ եւ ուղղափառ Հայոց գլխաւորներն աղերսանաց գրով գրմեցին ամենայն Հայոց Հայրապետ Տ. Տ. Փրկապոտ Աթոռակիսոսին ի ս. Էջմիածին. ս. Հայրապետն սկիզբն փութաց անմիջապէս խրատական գրեր եւ խաղաղատէր ու հաշտարար եկեղեցական ու աշխարհական մարգիկ ուղարկել Կ. Պօլիս, բայց սորանով էլ չվերջացաւ շփոթութիւնը, վասն զի լատինամիտ Հայերը յաջողեցան կրկին վայր գցել Տ. Դաւիթ պատրիարքին զկնի չորս ամսոյ, որի պատճառաւ անհնարին խռովութիւն եւ մեծ շփոթութիւն աւելան Կ. Պօլսում. պատրիարքական Աթոռն անկաւ աշխարհական տեղակայների ձեռք մի քանի ամիս, մինչ Աթոռացի

եղիագար վարդապետը նոյն աշխարհական տեղակալների սիրտը գրաւելով նստաւ պատրիարք, թէեւ բուն Հայոց մեծամեծները հաւանութիւն չտուին, արդէն ծանօթ լինելով նորա փոփոխամիտ բնաւորութեանը, Տ. Տ. Փիլիպպոս Հայրապետ վնասակար եւ շփոթ լուրեր լսելով Կ. Պօլսից, գրեց Կ. Պօլսոյ պատրիարքին, երեւելի իշխանաց եւ այլ հարկաւոր տեղեր, թէ « ես ի մօտոյ գամ այդր », եւ իսկոյն աճապարեց ճանապարհ ընկնել շատ մի գիտնական եպիսկոպոսներով եւ վարդապետներով*):

Չամչեան Հ. Միբայէլ ինկատի ունելով Հռովմայ շահը՝ լռում է խռովութեան իսկական պատճառներն, որի գրածն բոլորովին ուղիղ գատողութեան գէմ է. այս տեղ ինքնին հարց է ծագում Չամչեանի լռած պատճառներն որոնելու եւ իլոյս հանելու բացադրութեամբ. ուստի կաշխատենք յայտնել ճշմարտութիւնն, որի համար եւ գրիչ ձեռք առինք, որի համար եւ Տ. Տ. Փիլիպպոսի կեանքը մեզ նիւթ վեր առինք, նախ Չամչեանի լռութեան վարագործի տակ ծածկածն ի լոյս հանելու. Բ. ս. Փիլիպպոսի խոհական կառավարութիւնն, հեռանկատ տեսութիւնն եւ ազգաշէն մեծագործութիւնները նկարագրելու, Արարատի ընթերցողաց փոքրիկ ծոռայութիւն մի անելու:

Չհղւենք հարցից:

Հարց — Եթէ ս. Փիլիպպոս կաթողիկոս գնում էր Կ. Պօլիս ժողովրդի մէջ ծագած կրօնական խռովութիւնը բառնալու, որի համար եւ յատուկ հրաւիրուած էր. ուրեմն ի՞նչ է պատճառը նորա ս. երուսաղէմ գնալուն Կ. Պօլսից առաջ. եթէ խռովութեան հրդեհն Կ. Պօլսումն էր, շիջուցանելու համար խնդրած ԶՈՒՐՆ (Փիլիպպոս կաթողիկոսի ներկայութիւնը) անշուշտ Կ. Պօլսին էր հարկաւոր, ի՞նչ է բուն պատճառը, որ ս. Հայրապետն ստիպուել է գէպ ի ս. երուսաղէմ գնալ, եւ ի՞նչն ստիպեց նո-

(*) Տ. Տ. Փիլիպպոսի կաթողիկոսութեան ժամանակ Սոյո վանքն իւր թեմերումն աւելի խիստ զեղծմանց եւ անկարգութեանց մէջ ընկած էր, սկսած 1633 թուից Տ. Միսէօն հակաթոռ կաթողիկոսի ձեռքը, որին Տ. Տ. Փիլիպպոս ամենայն Հայոց կաթողիկոսը յանդիմանական գրով ի կարգ հրաւիրած էր, բայց նա փոխանակ ուղղւելու, անզգամութեամբ եւ լրբութեամբ պատասխանելով աւելի զեղծումներ արաց ի վնաս Հայ ազգի եւ եկեղեցւոյ:

րան տարով բացակայել Մայր Աթոռից եւ Հայաստանից դուրս գալ, երեսուցէմ գնալ: Սկսենք այս հարցերին պատասխանել համառօտապէս եւ անաչառութեամբ, պարզելով Չամչեանի մթութեան մէջ թաղած պատճառներն, եւ այնու վերջացնել Ե. Հայրապետի կենսագրութիւնն, բացադրելով նորա բուն նպատակն, որ հետեւանք է իւր հեռատեսութեան, խոհեմ կառավարութեան եւ իմաստուն հանճարոյ:

Պատաս. Ամենայն Հայոց Տ. Տ. Փիլիպպոս Կաթողիկոսի Կ. Պոլիս գնալու ամենագլխաւոր պատճառն այս էր. — Հռովմայ պապի արքանեակ Հայ պապականք Կ. Պոլսում օր ըսա օրէ բաւական շատացել եւ մի եւնոյն ժամանակ բաւական մեծ ազդեցութիւն էին ստացել Բ. դրան պաշտօնէից մօտ. այդ օտարամոյնների եւ խաբուածների ձեռք որջամիտ Հայոց ժողովրդի մէջ ի վաղուց հետէ խռովութիւն սերմանած էին եւ ջանում էին հետ զհետէ որսալ բուն Հայերից եւս պապականութեան պրոպագանդային, ինչպէս վերին ասացինք, ճիշտ այժմեան բողոքականութեան պրոպագանդայի ընթացքովն*): Մեծ Հայրա-

(*) Այժմ եւս Հայ բողոքականներ տեսնելով որ Հայ եկեղեցուց եւ ազգից իսպառ բաժանւած զրոյթեամբ չեն կարօղ իւրեանց նպատակին հասնել — Հայաստանի մէջ ստուար մեծամասնութիւն կազմել բաղուժ հետեւողներով, որսալ բողոքականութեան պրոպագանդային. ուստի Հայ Եկեղեցի հազած փափագում են ձեռք երկարացնել Հայոց ազգի գործերի մէջ Հայ մամուլի ներկայացուցիչ խմբադիրներից ոմանց ձեռք, որք հոյ՛ն Եկեղեցի կամ այլոց Եկեղեցի դառնալով կամ անգիտութեամբ տնհեռատեսութեամբ եւ կամ հակառակասէր ետութեամբ պաշտպանում են նոցա ազգակործան ջանքերն. աշխատելով Հայ հոգեւորականութեան վարկն ու համարումն եւ ազդեցութիւնն իսպառ բառնալ, որով եւ Ազգային եկեղեցին հիմէ հնար է այնպիսի անձնաւորութեանց ձեռք դնել, որոց շնորհիւ կարենան հետ զհետէ իւրեանց նպատակն յառաջ մղել: Ահա այս նպատակաւ, այս պատուակաւ կամենում են ազգն ու եկեղեցին բաժանել իրարուց մի քանի փողաքշտկան բառեր շարտելով իւրեանց գրածների մէջ, բացապանշելով Բ-իւն, Հ-յեւն, Հ-յ լեւոն, Հ-յ Կղեր, Հ-յ Եկեղեցի եւն. Բայց մեք հաւատում ենք որ, այժմս Հայութիւնը միմիայն մի սոյրք եկեղեցւոյ մէջ կարելի է պահպանել, որից զատ ապագայ ունենալու ուրիշ միջոց չկայ. Ցասն եւ ինն դար Հայ ազգն ու եկեղեցին միայն կղզիացած եւ առանձնացած զրոյթեամբ կարողացաւ պահել, պահպանել իւր գոյութիւնն, միշտ խոյս աւելով օտար եկեղեցւոյ վարդապետութիւնից (Թէ եւ

սլետը գնաց ազատել իւր հօտն ոչխարազգեստ գայլերից, Հռովմայ ուռկանից եւ ընտանի թշնամուց — Հայ կաթողիկոսներից։ Ահա Չամչի լուսն կէտն։

— Ս. Երուսաղէմ գնալու գլխաւոր պատճառն էլ այս է երեւում, որ պապականացեալ Հայերը խօսելով բուն Հայոց գլխաւորների հետ, խնդրած լինին Տ. Տ. Փիլիպպոս Հայրապետից, որ նախ գնայ ս. Երուսաղէմ ժողով կազմելով անդ ազգի մէջից խռովութիւնը բառնալու ճարը հոգայ, ս. Հայրապետն ի սէր ազգի եւ եկեղեցւոյ մերում յանձն է առնում գնալ Երուսաղէմ, ուր ոչ թէ ՊԱՏԱՀԱՄԻ, ինչպէս գրում է Չամչին. այլ ոմանց լատինամիտ Հայոց ԽՈՐՀՐԴՈՎՆ Սոյ Տ. Ներսէս հակաթու կաթողիկոսն եւս եկաւ ներկայ լինել ժողովին եւ ջանալ իւր նպատակն յառաջ տանել, յօգուտ պապականութեան եւ բաժանման Արեւելեան եւ Արեւմտեան Հայոց, Արեւմտեան (Տաճկահայաստանի) բոլոր թեմերն ձեռք բերել, ապօրինի կաթողիկոսութիւնն օրինաւոր ճանաչել տալ թէ Ազգից, եւ թէ Տէրութիւնից, որով եւ պապականութեան ուռկանի մէջ հեշտութեամբ գցել Տաճկահայաստանի Հայ ժողովուրդն լատինամիտ Սոյ եկեղեցականների ձեռք։

Որովհետեւ լատինամիտ Հայեր խափում էին Սամանեան տէրութեան նախարարներին ունենալ Կ. Պօլսում այնպիսի պատրիարքներ եւ Սոսումն էլ այնպիսի զօրեղ կաթողիկոսներ՝ տէրութեան պաշտպանութեամբ, որ Սամանեան շահերին նպաստեն (իսկապէս Հռովմայ պապի գահին), քան թէ Էջմիածնի Մայր Աթոռի հաւատարիմ՝ եպիսկոպոսներից Կ. Պօլսոյ պատրիարք ունենալ, Էջմիածնի, որ Պարսից տէրութեան երկիր է եւ հող ասում էին։ Այսպէս ահա Հայ կաթողիկոսներ յիշելով թշնամի եւ հակառակորդ լինելով հայութեան, իսկ Սիսը մեծաւ մա-

լինի դա ազգաւ Հայ) և ծէսերից, շրջապատող ազգաց սովորութիւններից, և այսու հետեւ էլ նոյն առանձնացած զրութեամբ միայն պիտի կարենայ շարունակել իւր գոյութիւնն և ամբողջութիւնն ընդգրկելով իւր միակ պարծառք Ս. Էջմիածնի ՄԱՏՆՋԵՆԱՅԻՐ ՏԵՂԻ ԲԱՆԱԶԱՅԵԱՆ, ՍԻՐՏ ԵՒ ԿԵՆԴԱՆՈՒԹԻՒՆ ԷԼՅՈՒԹԵԱՆ, խոյս տալով օտարների գործիք դարձած ոմանց նենգ ու խարդախ ընթացքից, շփ մարգարէութիւններից, Էր-շոյ-խոստու ծներից և թակարդներից։

սամբ խմորուած պապականութեան խմորով, որի միաբանք եւ կաթուղիկոսունք իսկ բոլորովին տգէտ եւ անուս գոյով, մինչեւ անգամ Հայերէն աշխարհիկ լեզուաւ խօսելուց էլ զուրկ էին, Տաճկական բառերով էին խօսում. բայց եւ այնպէս աշխատում էին Սոյ չակաթոռ կաթուղիկոսութեան թեմերն ընդարձակել, ամբողջ Տաճկահայաստանը Սոյ վիճակ դարձնել, Այս ամեն ձախող հանգամանքներն ի նկատի ունելով ս. Հայրապետը պարսպապէս գնալ Երուսաղէմ, երկու չարեաց փոքրագոյնն ընտրելով զէշ-ճ օրէնաց զիջանել Սոյ չակաթոռ Տ. Ներսէս Կաթուղիկոսի հետ ժողով կազմել, որպէս զի կարողանայր Հայաստանեայց եկեղեցւոյ պառնայցող մեծամեծ չարեաց առաջն առնուլ, գէթ կանոնափակ անել Սոյ կաթուղիկոսութիւնն եւ Հայ կաթուղիկոսերի ազգագործան ձգտումներն, անձարացած յանձն առաւ զ' Երմիածին (Ս. Էջմիածին եւ Սիս) Դիան զէրոյ վեճակն չառնելու յեւթարէնց ԱՊՕՐԻՆԻ ԿԱՆՈՆՆ, այնու Էջմիածնի գերիշխանութիւնն եւ ընդարձակ իրաւասութիւնն էլ կանոնափակել, Սոյ թեմականներէից ոչ ոքի չձեռնագրելովն. ժողովի այս կանոնը ճարահատեալ առ ժամանակեայ ընդունեց ս. Փրիլպպոս Հայրապետը մի միայն Սոյ ձրգտումներն սահմանափակելու եւ Հայ կաթուղիկոսերի վատ խորհրդոց առաջն առնելու եւ վրդովածներն խաղաղացնելու նպատակաւ. (Տես. պատ. ժող. տպեալ 1874 ամի ի տպարանի ս. Էջմիածնի, Մխիթարեան Արք. Արքեպիսկոպոսից աշխատասիրած):

Երանելի Հայրապետն ս. Երուսաղէմի մէջ Երմիածին «Կաթուղիկոսութեան» փոքրագոյնն վերջացնելով դարձաւ Կ. Պօլիս ու Տ. Նիկիա գար պատրիարքին պաշտօնից հանելով՝ նորա տեղն Երեւանցի կամ Մոզնեցի Յովհաննէս վարդապետը, (որ հաւատարիմ էր ս. Էջմիածնի եւ Հայ եկեղեցւոյ) Կ. Պօլսոյ պատրիարք դրաւ, որ ճշմարիտ Հայութեան եւ մերոյս ս. Կրօնի պաշտպան լինի իւր խոհական կառավարութեամբ եւ խաղաղասիրութեամբ:

Այսպէս ահա հեռատես Հայրապետն ընտրելով երկու չարեաց փոքրագոյնն ԱՌԺԱՄԱՆԱԿԱՅ ԶԻԶՈՒՄՆ՝ տպագայն յանձնեց Միածնի ԽՆԱՄՈՅ, որ հաճեցաւ ի տեսլեան երեւել ս. Գրիգոր Լուսաւորչին եւ յայտնել ս. Էջմիածնի հաշտեալութեամբ Կաթուղիկոսութեան Հայաց: (Տես Ագաթ. 270 - 279 էր. տպեալ

Կ. Պէլե- 1822 թ-ին) եւ ապաւինելով ԻԽՈՍՏՈՒՄՆ ՄԵՄ, որ առ նոյն ս. Գրիգոր Լուսաւորիչն Հայաստանեայց. աստ (ի Հայաստան) թշնամիք մի գորասցին, մի հերձուածոց աղանդք*) բուսցին, յերկնից գայր ձայն Աստուածային, թէ հայցուածք քո կատարեսցին: (Շարաւառ եօլն խաւառաւաց):

(*) Տ. Տ. Փիլիպպոս Կաթողիկոսի օրով ինչ դեր որ խաղում էին Կ. Պոլսում պապական Հայեր, նոյն և այսօր կրկնումէ բողոքական Հայոց ձեռքը տեսարանը նոյն է, միայն անձներ փոխուած են, նոյն ձրգտումն ունի նաև Սոյ Հակաթոռ և պիտականուն կաթողիկոս Մկրտիչ Էջմիածնի դէմ երդմնազանց եպիսկոպոսը, բայց Միածինն Յիսուս իւր խոստումով ապահովել է արդէն - Էջմ-ձնի հիշելն---որ տեղի լինէլ Գ-ն-յ-դէր-նէմ-մէն-ն շոյոյ, խոստացեր է նաև հերձ-ծոց -լն-դէր-լն-նէլ Հայ-դան-մ: Ձուր ուրեմն փորձ են փորձում Էջմիածնի սխերիմ թշնամիներն, Դաւթի կերպարանքով Սաւուղի գործ գործողներն լրբերի և յանդուգն գրուածներով յարձակուել ս. Էջմիածնի և նորա Վեհ. Գահակալի վերայ, ուրանալով նորա սխրագործութիւններն, որ պակաս չեն հրջանկայիչատակ Տ. Տ. Փիլիպպոսի սխրագործութիւններից. բողոքատուութիւնն թողում որջամիտ ընթերցողներին և ապագային, նոյնպէս և գնահատութիւնն, Վեհափառ Հայրապետն անշուշտ միտ բերելով իւր սրբազան Նախորդների կրած տառապանքներ իւրեանց ներկայից, իւրեանց ընտանի թշնամիներից, Ինքն ևս իւր գահակալութեան օրից յանձն է առել վիշտ, նիղումիւն, փշոտ ճանապարհ, ամենայն ազգաշէն գործերի դէմ ահագին թումբեր, և խոչընդոտներ և մինչև իսկ իւր անձնականի դէմ բարոյական սպանութեան ձեռնարկողներին համար ասումէ « Հայր թող սոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն, մի՛ համարեր սոցա զայս ի մեզս »:

Այո՛, ես ինքս վկայ եմ, որ Վեհ. Հայրապետը վերջին ժամանակներս Հայ մամուլի յարձակողական յօդուածները հանդարտ սրտով կարդումէ բոլորովին առողջ մտքով, հոգեկան կատարելութեամբ և այլն, շարունակումէ իւր ազգաշէն գործերն, բնաւ ին կարեորութիւն չտալով շարամիտների հայհոյանաց, և ի՞նչ հարկ իմ վկայութեան, երբ նորա մեծագործութիւններն և հանապազօրեայ ազգաշէն տքնութիւններն յայտնի ապացոյց են և վկայ, բայց ես իրրեւ սրբազան պարտք համարելով ինձ ճշմարտութիւն ի լոյս հանելու աշխատութիւնն, սոյն ծանօթութիւնն աւելացրի, շատ պարագաների մէջ համանման գտնելով սոյն երկու ազգաշէն Հայրապետաց կեանքն, որոց մեծագործութեամբ պայծառացել ու բարեգորդուել է Արարատեան Մայր Աթոռն և քանի կան այդ շինածները, քանի կայ Հայ Ազգն ու Եկեղեցին, Հայ պատմութիւնն ու դպրութիւնն, ներկայ Վեհ. Տ. Տ. Գեորգ Դ. Հայրապետի Անունը պիտի յիշատակուի ի շարս Հայաստանեայց եկեղեցւոյ ընտրելագոյն Հայրապետաց:

Երջանկայիշ. Հայրապետն Կ. Պօլսում ազգայնոց մէջ հանգանակութեան դիմելով հոգաց Կ. Պօլսոյ եկեղեցեաց մեծագումար պարտքերն եւ ապա ողջամբ վերագարձաւ ու Էջմիածին ի Մայր Աթոռն եւ սկսաւ հիմնարկութիւն անել Էջմիածնի Տաճարի մեծ եւ հրաշակերտ զանգակատանն՝ Արեւմտեան կողմն կից որմոյ Սրբոյ Տաճարին, ծախիւք բնիկ Պրուսացի Անտոն Զէլէպու. 1654 թուին (ինչպէս յայտնի է զանգակատան արձանագրութիւնն նից*) ի մեծի պահոց. բայց հազիւ կիսով չափ հասցրեց շինութիւնն, վախճանեցաւ 1665 թուի Մարտ 25ին, մեծ «ահոց հինգերորդ կիրակէ, ի հասակի 63 ամաց, յետ կալոյ ի Հայրապետութեանն ամս 22 եւ ամիսս 3, զոր թէ եւ կամեցան թողել զանգակատան ներքոյ, բայց Երեւանու Պարսից Խանր արգելք եղաւ. ռիսացած լինելով ու Հայրապետին սոյն փառաւոր զանգակատան շինութեան համար, ուստի զկնի 6 աւուր ննջման ու Հայրապետին՝ հաւաքեցան մերձակայ եւ հեռաւոր վանքերից շատ եպիսկոպոսներ եւ վարդապետներ, մեծ եւ փառաւոր հանդիսով, լի երախտագիտական զգացմամբք եւ միանգամայն սգով, անթիւ ժողովրդեան բազմութեամբ ու Էջմիածնի Տաճարից տարան, թաղեցին ի Տաճարի սրբոյն Հռիփսիմեայ ի Հիւսիսակողմն, ուր մինչեւ ցայսօր ու Էջմիածնի միաբանութիւնն եւ վաղարշապատու ժողովուրդը եւ շատ քերմեանդ ուխտաւորք երախտագիտութեամբ ուխտ են գնում նորա ու դամբարանի վերայ:

(*) (Ա. Արշակունիքի): Ի թագաւորութեան Պարսից Հաջաբասի (Բ.) նաեւ ի Հայրապետութեան Տ. Փիլիպպոսի թուին (Հայոց) ՌՃԳ. հիմնարկեցաւ, Տ. Յակոբայ Զուլայիցոյ ՌՃԶ աւարտեցաւ՝ զանգակատունս, ծախիւք Անտոն Պարոն Զէլէպին ի փառս Բրիտոսի Աստուծոյ մերոյ:

(Բ. Արշակունիքի): Հնորհիւ Աստուծոյ և օժանդակութեամբ Սրբազան Կաթողիկոսաց Փիլիպպոսի և Յակոբայ Հրաշակեալեցաւ զանգակատունս և ծաղկեցաւ թուին (Հայոց) ՌՃԶ.՝

(1) Թէեւ արձանագրութեան մէջ կատարուած նշանակուած է ՌՃԶ թուին. բայց Աւագիւ ժամանակակից պատմիչն մի տարի աւելի է նշանակում:

(2) Այս թուականն եւս զանգակատան ծաղկանկարելու թուականն է, եւ ոչ թէ հիմնարկութեան կամ աւարտման:

ՅԻՇԱՏԱԿՆ ԸՐԴԱՐՈՑ ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ ԵՂԻՑԻ՝

U. 92.2-24.

ፆቲ ተ'ረገጣኛህ ኮኔ ንረፀበትህ ሂሳብህ ለገጽ

ከጥቅምት ፩፣ ፲፱፻፲፱ ዓ.ም. ጀምሮ ሲሰጥ

($U = 1 - \frac{1}{2} - \frac{1}{4} - \frac{1}{8} - \frac{1}{16} - \frac{1}{32} - \frac{1}{64} - \frac{1}{128} - \frac{1}{256} - \frac{1}{512} - \frac{1}{1024} - \frac{1}{2048} - \frac{1}{4096} - \frac{1}{8192} - \frac{1}{16384} - \frac{1}{32768} - \frac{1}{65536} - \frac{1}{131072} - \frac{1}{262144} - \frac{1}{524288} - \frac{1}{1048576} - \frac{1}{2097152} - \frac{1}{4194304} - \frac{1}{8388608} - \frac{1}{16777216} - \frac{1}{33554432} - \frac{1}{67108864} - \frac{1}{134217728} - \frac{1}{268435456} - \frac{1}{536870912} - \frac{1}{1073741824} - \frac{1}{2147483648} - \frac{1}{4294967296} - \frac{1}{8589934592} - \frac{1}{17179869184} - \frac{1}{34359738368} - \frac{1}{68719476736} - \frac{1}{137438953472} - \frac{1}{274877906944} - \frac{1}{549755813888} - \frac{1}{1099511627776} - \frac{1}{2199023255552} - \frac{1}{4398046511104} - \frac{1}{8796093022208} - \frac{1}{17592186044416} - \frac{1}{35184372088832} - \frac{1}{70368744177664} - \frac{1}{140737488355328} - \frac{1}{281474976710656} - \frac{1}{562949953421312} - \frac{1}{1125899906842624} - \frac{1}{2251799813685248} - \frac{1}{4503599627370496} - \frac{1}{9007199254740992} - \frac{1}{18014398509481984} - \frac{1}{36028797018963968} - \frac{1}{72057594037927936} - \frac{1}{144115188075855872} - \frac{1}{288230376151711744} - \frac{1}{576460752303423488} - \frac{1}{1152921504606846976} - \frac{1}{2305843009213693952} - \frac{1}{4611686018427387904} - \frac{1}{9223372036854775808} - \frac{1}{18446744073709551616} - \frac{1}{36893488147419103232} - \frac{1}{73786976294838206464} - \frac{1}{147573952589676412928} - \frac{1}{295147905179352825856} - \frac{1}{590295810358705651712} - \frac{1}{1180591620717411303424} - \frac{1}{2361183241434822606848} - \frac{1}{4722366482869645213696} - \frac{1}{9444732965739290427392} - \frac{1}{18889465931478580854784} - \frac{1}{37778931862957161709568} - \frac{1}{75557863725914323419136} - \frac{1}{151115727451828646838272} - \frac{1}{302231454903657293676544} - \frac{1}{604462909807314587353088} - \frac{1}{1208925819614629174706176} - \frac{1}{2417851639229258349412352} - \frac{1}{4835703278458516698824704} - \frac{1}{9671406556917033397649408} - \frac{1}{19342813113834066795298816} - \frac{1}{38685626227668133590597632} - \frac{1}{77371252455336267181195264} - \frac{1}{154742504910672534362390528} - \frac{1}{309485009821345068724781056} - \frac{1}{618970019642690137449562112} - \frac{1}{1237940039285380274899124224} - \frac{1}{2475880078570760549798248448} - \frac{1}{4951760157141521099596496896} - \frac{1}{9903520314283042199192993792} - \frac{1}{19807040628566084398385987584} - \frac{1}{39614081257132168796771975168} - \frac{1}{79228162514264337593543950336} - \frac{1}{158456325028528675187087900672} - \frac{1}{316912650057057350374175801344} - \frac{1}{633825300114114700748351602688} - \frac{1}{1267650600228229401496703205376} - \frac{1}{2535301200456458802993406410752} - \frac{1}{5070602400912917605986812821504} - \frac{1}{10141204801825835211973625643008} - \frac{1}{20282409603651670423947251286016} - \frac{1}{40564819207303340847894502572032} - \frac{1}{81129638414606681695789005144064} - \frac{1}{162259276829213363391578010288128} - \frac{1}{324518553658426726783156020576256} - \frac{1}{649037107316853453566312041152512} - \frac{1}{1298074214633706907132624082305024} - \frac{1}{2596148429267413814265248164610048} - \frac{1}{5192296858534827628530496329220096} - \frac{1}{10384593717069655257060992658440192} - \frac{1}{20769187434139310514121985316880384} - \frac{1}{41538374868278621028243970633760768} - \frac{1}{83076749736557242056487941267521536} - \frac{1}{166153499473114484112975882535043072} - \frac{1}{332306998946228968225951765070086144} - \frac{1}{664613997892457936451903530140172288} - \frac{1}{1329227995784915872903807060280344576} - \frac{1}{2658455991569831745807614120560689152} - \frac{1}{5316911983139663491615228241121378304} - \frac{1}{10633823966279326983230456482242756608} - \frac{1}{21267647932558653966460912964485513216} - \frac{1}{42535295865117307932921825928971026432} - \frac{1}{85070591730234615865843651857942052864} - \frac{1}{170141183460469231731687303715884105728} - \frac{1}{340282366920938463463374607431768211456} - \frac{1}{680564733841876926926749214863536422912} - \frac{1}{1361129467683753853853498429727072845824} - \frac{1}{2722258935367507707706996859454145691648} - \frac{1}{5444517870735015415413993718908291383296} - \frac{1}{10889035741470030830827987437816582766592} - \frac{1}{21778071482940061661655974875633165533184} - \frac{1}{43556142965880123323311949751266331066368} - \frac{1}{87112285931760246646623899502532662132736} - \frac{1}{174224571863520493293247799005065324265472} - \frac{1}{348449143727040986586495598010130648530944} - \frac{1}{696898287454081973172991196020261297061888} - \frac{1}{1393796574908163946345982392040522594123776} - \frac{1}{2787593149816327892691964784081045188247552} - \frac{1}{557518629$

Այստեղ մանուկները և օրիորդները խառն են կրթվում մի ուսուցիչ-
բանում և այս ընդհանուր կրթութեան վերայ այսպիսի ազատ գաղափար
ունենալը, որը ամեն տեղ փնասակար է համարվում, այս նոր ժողովրդի
պակաս տարօրինակութիւններից մին է:

• Մեր տղայքը աղնիւ ենւ ասումեն նոքա, վատ մտքեր նոցա անծանօթ ինկելով նոքա միմեանց եղբայր և քոյր են անուանում, և մենք ոչինչ տնյարմարութիւն չենք տեսնում որ դպրոցը ներկայացնէ ընտանեկան կեանքի պատկեր, ընդհակառակը մենք պատեղ մեծ օգուտներ ենք գտնում, Մեր աղջիկները այս համախառնութեան մէջ շահվում են եռանդ և մտաւոր զարգացում, որոնցով նոքա լինում են մայրեր և կանայք, այս սուրբ խնդրացն արժանի, Մեր մտնուկները սովորում են այնտեղ յարգել կնոջ և